



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
 ՀՀ ԲՆԱԴԱՎՈՒԹՅԱՆ
 ՆԱԽԱՐԱՐ
 Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

«14» 08 2017թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
 ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 71

Ձեռնարկողը՝

Կամարիսի համայնքապետարան
 ՀՀ Կոփայքի մարզ

Գործունեությունը՝

Կամարիս համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հարակազմի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն
 ՀՀ Կոփայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցությունների փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ
 տնօրեն՝



Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 71

«14» 08 2017թ.

ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝ ՀՀ Կոտայքի մարզի Կամարիսի համայնքապետարան

Փաստաթղթի տեսակը՝ Հիմնադրության փաստաթուղթ

ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս համայնքի պարզեցված գլխավոր հատակագիծը՝ համատեղված համայնքի կառուցապատված և կառուցապատման ենթակա տարածքների գոտևորման նախագծի հետ, մշակվել է «Կարոշիննախագիծ» ՍՊԸ-ում, ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս համայնքի պատվերով (Պայմանագիր N ԿՄԿԸ-ՊԸԱՇՁԲ -16/ 1):

Կամարիս համայնքը գտնվում է Կոտայքի մարզի հարավային հատվածում կամ Աբովյանի ենթաշրջանի կենտրոնական հատվածում՝ Հատիս լեռան հարավային փեշին, որը հարավային հատվածից շրջապատված է բլրակներով և այդ հատվածներում ընկած տարածքները զառիթափ են, գտնվում է ծովի մակարդակից 1515մ. բարձր նիշի վրա: Հեռավորությունը Աբովյան քաղաքից 11կմ է իսկ Երևան քաղաքից՝ 21կմ հյուսիս-արևելք Հ-1 ավտոխճուղու Աբովյան, Բալահովիտ և Մայակովսկի հանգույցից տեղական ճանապարհով դեպի արևելք՝ Արամուս-Գեղաշեն ուղղությամբ:

Կամարիս համայնքում ներկայումս բնակվում է 2485 մարդ, հեռանկարում՝ 3305 մարդ:

Շրջանի կլիման չոր է և խիստ ցամաքային (ամռանը մինչև +38°C, իսկ ձմռանը - 29°C): Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 534մմ: Ձյան ծածկույթի միջին հաստությունը հասնում է 15-30սմ: Հողի սառցակալման առավելագույն խորությունը հասնում է 82սմ:

Բնակավայրի տարածքի կառուցապատումը ներկայացված է բնակելի կառուցապատմամբ, հասարակական սպասարկման օբյեկտների կենտրոնացած տեղակայմամբ:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 3768.01հա: Համայնքի հողերից 3553.39հա ներկայումս ունի գյուղատնտեսական նշանակություն, հեռանկարում կլինի 3389.59հա: Բնակավայրերի հողերը կազմում են 127.82հա, հեռանկարում՝ 212.893հա, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերը՝ 51.80հա, հեռանկարում՝ 57.863հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների հողերը՝ 3.68հա, հեռանկարում՝ 10.302 հա,

Արամուս ՍԲ օրինակ՝ Ջեմա Կ. Կարապետյան

հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ 15.52հա, հեռանկարում՝ 84.352հա, ջրային հողեր՝ 15.80 հեռանկարում 13.01:

Կամարիս համայնք զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ և գյուղմթերքների վերամշակությամբ:

Կամարիս համայնքի բնակելի տարածքները նախատեսված են հիմնականում բնակելի կառուցապատման, դրանց ենթակառուցվածքների, հասարակական նշանակության օբյեկտների առաջնային տեղակայման համար: Բնակելի գոտիները իրականացված և նախատեսված են 1000-1200մ³ տնամերձ հողամասերով: Կամարիս գյուղը հիմնականում կառուցապատված է 1-2 հարկանի քարե պատերով, ավանդական շարվածքով, ուղիղ շարվածքի տուֆ քարերով, թիթեղյա կամ ասբոշիֆերի ծածկ ունեցող տներով:

Գյուղի կենտրոնը ձևավորված է դպրոցի, մանկապարտեզի շենքերով, գյուղապետարանով, փոստի շենքով և առևտրա-սպասարկման կառույցներով:

Հին թաղամասերը ձևավորված են կենտրոնի շուրջ՝ հիմնականում հարավ և հարավ արևելյան կողմերից: Հին թաղամասերի փողոցները ոլորաններով են, երբեմն նեղ, տեղեր կան՝ փողոցի լայնությունը չի անցնում 2.5մ:

Բնակավայրը խմելու ջուր ստանում է հնց բնակավայրի տարածքում գտնվող ՕԿՋ-ից, որը ջուրը վերցնում է հարավ-արևելքում գտնվող աղբյուրներից՝ կապտաժային եղանակով: Ջրամբարն ունի 400մ³ տարողություն և գտնվում է 1565մ նիշի վրա:

Ջրամատակարարման համակարգի տեխնիկապես վատ վիճակը, ջրատար խողովակների մաշվածությունը և քայքայվածությունը, այս ամենը բերում է մեծ հոսակորուստների: Ջրամատակարարման համակարգը կենտրոնացված է: Բնակչությանը խմելու-կենցաղային, արտադրական և հակահրդեհային ջրապահանջներն իրականացվում են երեք ջրատարով:

Պահանջները բավարարելու համար անհրաժեշտություն է առաջանում, հեռանկարում նոր ՕԿՋ տեղադրելու, որը պետք է ունենա 400մ³ տարողություն: Առաջարկվում է նոր խորքային հորերից եկող ջրագծերը ուղղել ՕԿՋ՝ վերանորոգումից հետո, և կառուցել նոր ՕԿՋ նոր թաղամասի համար և նոր ցանց, ընդգրկելով խորքային հորերի ջրամատակարարումները:

Նախատեսվում է խմելու ջրագծերի վերակառուցում՝ պոլիէթիլեն խողովակներով, ինչպես նաև թվով 25 հատ փականային հանգույցների կառուցում ջրամատակարարման հորերում:

Ջրապահանջը հաշվարկելիս, որպես հիմք ընդունվել գործող ՇՆ և Կ 2.04.02-84: Բնակչության մեկ մարդու օրական ջրապահանջը հաշվարկային տարում ընդունվում է 200լ/օր:

Կամարիս համայնքը չունի կոյուղու համակարգ և յուրաքանչյուրը անհատապես ինքն է լուծում իր խնդիրները: Հեռանկարում մշակվել է գյուղի ընդհանուր կոյուղու համակարգի սխեմա, որտեղ բնակավայրի փողոցներով կեղտաջրերը հավաքելով երկու գլխավոր կոլեկտորներով միանում է բնակավայրի հյուսիս-արևմտյան հատվածով անցնող հեղեղատարի ձախ կողմում կառուցվող նոր մաքրման կայանին, որը կունենա 800լամ/օր տարողություն:

Ռելիեֆի նիշերի տարբերությունը հնարավորություն է տալիս, որ կեղտաջրերն ինքնահոս կերպով հավաքվեն կոլեկտորի մեջ և տեղափոխվեն գյուղի ցածրադիր մասը, այնուհետև ջրահեռացման կոլեկտորով միանում գլխավոր կոլեկտորին:

Նախատեսվում է կառուցել ջրահեռացման ներհրապարակային ցանց՝ իր հավաքող կոլեկտորներով, ինչպես նաև նախատեսվում է կառուցել թվով մոտ 1000 հատ կոյուղու դիտահորեր:

Փողոցների դիրքն ու թեքությունները նախատեսվում են այնպես, որպեսզի անձրևաջրերը ինքնահոս կերպով հոսեն բնակավայրի վերին հատվածներից դեպի Կամարիսի արևմտյան եզրի ձորակը:

Կամարիս գյուղի տնամերձ հողամասերի ոռոգման ջրի աղբյուր է հանդիսանում գյուղի հարավ-արևմտյան հատվածում կառուցված ջրամբարը, որը ջուր կարող է ստանալ Կոտայքի ջրանցքից: Նշված ջրամբարով, առանց պոմպերի աշխատանքի, հնարավոր է ջրել միայն բնակավայրի 1500 նիշից ներքև գտնվող հատվածը, իսկ հյուսիսային ծայրին գտնվող թաղամասի համար պետք է վերանորոգվի ավազանը և վերակառուցվի պոմպակայանը: Բնակավայրի հիմնական և նոր թաղամասերը նախատեսվում է ոռոգել հարավ արևելքում գտնվող մեծ ջրամբարից՝ վերանորոգելուց հետո, կառուցելով նոր խորքային հոր իր պոմպով:

Հեռանկարում խողովակաշարերն անցնում են փողոցներին զուգահեռ: Յուրաքանչյուր մեկ հողակտորին նախատեսվում է մեկ ջրթող կառուցվածք:

Հասարակական կանաչ տարածքները և սիզամարգերը ջրելու համար խողովակաշարի վրա տեղադրված ջրթողները նախատեսված են 20մ հեռավորության վրա:

Ոռոգման ցանցի վրա նախատեսված են համապատասխան քանակի բաժանարար, օդահան և դատարկող հորեր: Նախատեսվում է ոռոգման ցանցի ամբողջական վերակառուցում:

Խողովակային ցանցը ոռոգման ժամանակաշրջանի վերջում դատարկվում է ջրից: Կամարիս համայնքի հեղեղատարը անցնում է գյուղի հարավ-արևելյան հատվածից դեպի արևմուտք: Ժամանակին հեղեղատարի երկու ափերն էլ ամրացրել են բետոնապատ պատնեշներով, որը հետագայում տարիների ընթացքում վնասվել է հեղեղներից և քանդվել որոշ հատվածներում:

Նախատեսվում է առաջնահերթ մաքրել հեղեղատարի հունը և վերականգնել պատնեշի քանդված հատվածները: Վեր նշված միջոցառումները կբացառեն ձորակում գտնվող հողամասերի հեղեղմանը:

Կամարիս գյուղի կառուցապատված մասը էլեկտրաֆիկացված է: Ցածր լարման օդային գծերի /0.4կվ/ ցանցի երկարությունը մոտ 7.6կմ է: Օդային գծերը տարված են այլումինե լարերով՝ փայտյա հենասյուների վրա, իսկ նոր կառուցվող թաղամասերում՝ ե/բ հենասյուներով: Բնակավայրի տարածքում ենթակայանները թվով չորսն են, հեռանկարում նախատեսվում է նոր թաղամասերի համար, ևս չորս փակ տրանսֆորմատորային ենթակայանների կառուցում:

Կամարիս համայնքը ներկայումս գազաֆիկացված է: Թաղամասերում կան գազաբախշիչ կետեր, որոնք թվով հինգն են: Գազաֆիկացումը իրականացված է գյուղ մտնող միջին ճնշման գազատարից: Միջին ճնշման գազատարից գազը մտնում է գազաբախշիչ կայան, որտեղ ստացվող ցածր ճնշման գազը խողովակներով մատակարարվում է բնակչությանը կենցաղային և ջեռուցման կարիքների բավարարման համար: Բնակավայրի առկա բնակչության՝ 2485 մարդ: Նախատեսվում է բնակչության աճ մինչև 3305 մարդ: Բնակչության աճին զուգընթաց կկառուցվեն նոր թաղամասեր և նոր 15կմ երկարության գազամատակարարման ցանց, որը կսնվի երկու գազաբախշիչ կետերից:

Ըստ կատարած նախնական հաշվարկների, Կամարիս գյուղի գազի հաշվարկային տարեկան ծախսը ներկայումս կազմում է 0.9մլն մ³ տարի, իսկ հեռանկարում 1.2մլն մ³ տարի:

Ներկայումս Կամարիս գյուղում ջերմամատակարարումը գործում է մասնակի: Հասարակական օբյեկտների համար նախատեսված կաթսայատունը գտնվում է կիսաքանդ վիճակում: Անհատական տները ջեռուցվում են վառարաններով:

Կուլտուր-կենցաղային, հասարակական շենքերի ջերմային կարիքները բավարարելու համար նպատակահարմար է ունենալ կաթսայատուն:

Համայնքի հեռանկարային զարգացման համար նախատեսված տները կունենան տեղական ջեռուցում և տաք ջրամատակարարում:

Կամարիս գյուղի հյուսիս-արևելյան եզրին գտնվող գործող գերեզմանոցի տարածքի սահմանափակում և բնակավայրի հյուսիսային հատվածում նախատեսվում է նոր տարածքներ գերեզմանոցի համար 5.06հա՝ պահպանելով գործող սանիտարական նորմերը:

Ներկայումս իրականացման փուլում է Կոտայքի մարզի աղբահանության կառավարման ծրագիրը, որի շրջանակներում Հրազդանում կկառուցվի նոր ժամանակակից աղբավայր:

Ծրագիրը նախատեսում է բնակավայրերում կազմակերպել փոքր տարողությամբ աղբահավաք վայրեր, որտեղից պարբերաբար աղբը կտեղափոխվի Հրազդան քաղաքի աղբավայր: Կամարիս համայնքի հարավ արևելյան հատվածում նախկին դատարկ քարհանքի տարածքում ներկա դրությամբ գործում է ժամանակավոր աղբավայրը, որտեղից էլ աղբը հետագայում կտեղափոխվի Հրազդանի աղբի վերամշակման գործարան:

Կամարիսի համայնքապետարանում տեղի են ունեցել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված հանրային քննարկումները, որոնց ընթացքում հնչած առաջարկությունները հաշվի են առնվել նախագծի լրամշակումների ընթացքում և հանրության կողմից հավանություն է արժանացել: Հատակագծում լուծված են կեղտաջրերի մաքրման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, աղմուկի մակարդակի նվազեցման և կանաչապատման հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Ընդհանուր առմամբ հեռանկարային զարգացման ընթացքում գլխավոր հատակագծում նախատեսված միջոցառումների արդյունքում Կամարիս համայնքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջ

Հիմնադրության փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Կամարիսի համայնքապետարանի կողմից ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝ 



Հ. Մետրոպյան